

ՅԱՐԱԿՈՒՄ ԹՈՒՐԵՒՅ ՄԵՋ

Թուրքիոյ ներքին գործերու նախարար Ալի Երլի Զայա յայտարարեց, թէ երկու զինեալներ սպաննուած են, երբ փորձած են յարձակիլ Թուրքիոյ Պոլիս քաղաքի դատարանին վրայ: Զինք անձեր վիրաւորուեցան յարձակումի ընթացքին, որոնցմէ երկուքը՝ ոստիկաններ: Յարձակումը ստանձնեց «Ժողովրդային Ազատագրութեան Յեղափոխական ճակատ»ը:

ՄԻԶԱԹԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԸ

Լիբանանի կառավարութեան վարչապետի գործակատար Նեժիպ Միքաթի ընդունեց Լիբանան այցելող՝ Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Սթեֆան Սիժոր-Լիէն եւ անոր ընկերակցող պատուիրակուիները:



Ժողովի աւարտին, նախարարը յայտարարեց, թէ այս այցելութեան նպատակն է հանդարտութիւնը վերահաստատել Միջին Արեւելքի շրջանին մէջ ու Լիբանանը հեռու պահել որեւէ տագնապէ: Ան պահանջեց նախագահի ընտրութիւն եւ բախումներու դադարեցում հարաւային Լիբանանի մէջ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎ


Լիբանանի կառավարութեան ընդհանուր քարտուղարը յայտարարեց, թէ վարչապետի պաշտօնակառար Նե-



Ժիպ Միքաթի պիտի հրահրէ կառավարութեան ժողով մը շաբթուան ընթացքին:

ՆԱՌԱՖ ՍԱԼԱՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ

Լիբանանցի դատարար Նաուաֆ Սալամ ընտրուեցաւ Լահէյի Միջազգային դատարանի նախագահ երեք տարուան ժամանակամիջոցի մը համար: Ան ալճերիացի



դատարար Սոհամատ Պաժժաուիէն ետք երկրորդ արաբն է որ կը ստանձնէ այս պաշտօնը: Նաուաֆ Սալամ ունի դոկտորականի աստիճան քաղաքական գիտութեանց մէջ, Փարիզի համալսարանէն: Պատմութեան դոկտոր է Սորպոնի համալսարանէն եւ ունի Օրէնքի մագիստրոսական վկայական Զարվըտ համալսարանէն:

ՏԱԳՆԱԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Միացեալ ազգերու կազմակերպութեան մէջ Ռուսական դաշնութեան ներկայացուցիչ Վասիլի Նիպենզիա յայտարարեց, թէ ԱՄՆ-ի եւ Միացեալ Թագաւորութեան վարած քաղաքականութիւնը Միջին Արեւելքի մէջ, կ'առաջնորդէ ժխտական քայլերու եւ կը վտանգէ ապահովութիւնը շրջանին մէջ:

ԱՐԺԱՆՅԻՆ ՊԻՏԻ ՏԵՂԱՓՈՒՆԷ

Արժանյիւնի նախագահ Խալիէ Միլէյ յայտարարեց, թէ Իսրայէլի մէջ իր երկրին դեսպանատունը պիտի տեղափոխէ



Երուսաղէմ, երբ այցելէ այդ երկիրը: Իսրայէլի վարչապետ Պենիափին Նեթանիահուի գնահատեց այս քայլը որպէս խոստումի կատարում:

ԲՈՒՌՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պաղեստինեան «Ժիհադ Իսլամի» կազմակերպութեան զինեալ թէ «Սարայա Ալ Զուտա» յայտարարեց, թէ իր



մարտիկները յարձակում գործեցին իսրայէլեան ուժերու վրայ Խան Եունէս քաղաքի արեւմտեան կողմը: Անոնք կրցան հարուածել հրասայլ մը հակազահապատ հրթիռով: Նաեւ պայթեցուցին ական մը հրասայլի մը տակ: Իսկ «համաս»ի զինեալ թէ «Ալ Զասսամ»ի մարտիկները պայթեցուցած են գրահապատ մը «Շաուազ» տիպի սաստիկ պայթուցիչ ականով:

ԶՈՅԵՐՈՒ ԹԻՒԸ

Կազա հատուածին մէջ գործող պաղեստինեան առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ 7



Յոկտեմբերին սկսած պատերազմական գործողութիւններու արդիւնքով ինկած զոհերու թիւը հասաւ 27.585-ի, իսկ վիրաւորներուն թիւը հասաւ 66.978-ի: Երեկ Իսրայէլ գործադրեց 12 սպանդ, որոնց զոհ գացին 107 անձեր ու վիրաւորուեցաւ 143 հոգի:

ԳԱՐԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՓՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Իսրայէլեան «Իսրաէլ Զիում» օրաթերթը յայտարարեց, թէ Իսրայէլ կը մտածէ հարաւային սահմանին մօտիկ Ռաֆահ քաղաքի բնակիչները փոխադրել հիւսիս, քաղաքին



վրայ իր կատարելիք յարձակումէն առաջ: Եգիպտոս սպառնացած էր Իսրայէլին, թէ ոեւէ գաղթական մուտքը Սինայի թերակղզի կրնայ աւարտել երկու երկիրներուն միջեւ կնքուած խաղաղութեան համաձայնագիրը:

ՆԱԽԱԳԱՅ ՄԻՍԻ ԾԵՇՏԵՑ

Եգիպտոսի նախագահ Ապտըլֆաթթահ Սիսիի խօսնակը յայտարարեց, թէ նախագահը ընդունած է Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարար Ալթը-



Նի Պլինքընը: Նախարարը Սիսիին փոխանցեց ԱՄՆ-ի նախագահին ողջոյնը եւ պատրաստակամութիւնը զարգացնելու երկու երկիրներուն միջեւ եղող ռազմավարական յարաբերութիւնը:

Ժողովին օրակարգի նիւթ դարձաւ Կազայի հատուածին մէջ պատերազմի դադարեցումը ու բնակչութեան տառապանքին վերջ դրուիլը: Սիսի շեշտեց Միացեալ ազգերու կազմակերպութեան պաղեստինցի գաղթականներու օժանդակող կազմակերպութեան կատարած մեծ գործին կարեւորութիւնը:

ԳՆԱՅԱՏԱՆՔ ԱՄՆ-Ի ԴԵՐԻՆ

Հայաստանի հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան բարձրորէն գնահատեց ԱՄՆ-ի կատարած դերը հարաւային Կովկասի շրջանին մէջ: Ան ընդունած է Միացեալ Նահանգներու դեսպան Զրիսթինա Զվինը: Վարչապետը գնահատած է ԱՄՆ-ի օժանդակութիւնը



Հայաստանի մէջ ժողովրդավարական բարեփոխումներու մարզին մէջ: Ան նաեւ գնահատած է ԱՄՆ-ի դերը Հայաստան-Ատրպէյճան յարաբերութեան մէջ կայունութեան հաստատումին համար: Զննարկուած է նաեւ Հայաստանի կողմէ առաջարկուած «Խաղաղութեան Խաչմերուկ» ծրագրի իրականացումին անհրաժեշտութիւնը խաղաղութեան համար:

ԳԱԳԻԿ ԳԻՆՈՍԵԱՆ՝ ՅԱՆԿԱՐԾԱՄԱՅ

Երեկ կեանքէն հեռացաւ Հայաստանի հանրապետութեան մշակութային վաստակաւոր գործիչ Գագիկ Գինոսեանը: Ան «Կարին» ազգագրական ու ասանդակական երգի-



պարի խումբի հիմնադիրն էր: Գեղարուեստական ղեկավար էր, մշակութաբան, 33 մշակոյթի վաստակաւոր գործիչ: Արցախի ազատամարտի մասնակցողներէն մէկն էր:

«ԶԵՆՔ ԿՐՆԱՐ ԴԻՏԵԼ ՄԻԱՅՆ»

Եմէիի հուսիներու «Անսար Ալլահ» կազմակերպութեան ղեկավար Ապտըլ Մալէք Ալ Յուսի յայտարարեց, թէ չեն կրնար դիտել իրենց եղբայր պաղեստինցի ժողովուրդին



սպանող առանց հակադարձելու: Ան ԱՄՆ-ը եւ Միացեալ Թագաւորութիւնը կոչեց չարի գործիքները սիոնական լուրջիւնով:

Ան յայտարարեց, թէ արաբական երկիրները ունին մեծ ներուժ, սակայն որեւէ քայլ չեն աններ դադարեցնելու համար իրենց եղբայրներուն սպանողը: Ան աւելցուց, որ իրենք ազատ են ու չեն հետեւիր որեւէ ցուցմունքի:

ԵՄԵՆ ԶԱՐՈՒԾԵՑ

Եմէիի բանակի խօսնակ գորավար Եահիա Սարիի յայտարարեց, թէ երկրի հրթիռային ուժերը հարուածած են երկու թիրախներ Կարմիր ծովուն մէջ: Մէկը բրիտա-



նական, իսկ միւսը ամերիկեան ապրանքատար նաւեր են: Ան աւելցուց, որ հարուածը տեղի ունեցած է յարմար միջոցներով ու հաստատաբար, քր Եմէն իրաւունք ունի Արաբական եւ Պարսից ծովերուն վրայ հսկելու, որպէսզի Իսրայէլի պաշարումը շարունակուի մինչեւ որ ան դադարեցնէ պատերազմը:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏՆ ՈՒ ԱՄՆ ԴԵՄՊԱՆԸ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՀՀ-ԱՄՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿՆՕՍՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԵՐ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Զրիսթինա Բլիքը, ընկերակցած են տարբեր ուղղութիւններով երկկողմ համագործակցութեան խորացման, Հայաստան-ԱՄՆ ռազմավարական երկխոսութեան վերաբերող հարցեր:



Փաշինեան ու Բլիքը միտքեր փոխանակած են Հարաւային Կովկասի մէջ տեղի ունեցող գործընթացներու, տարածաշրջանային ենթակառուցումներու ապաշրջափակման հնարաւորութիւններուն, Հայաստանի կառավարութեան «Խաղաղութեան խաչմերուկ» նախագիծին շուրջ:

Փաշինեան կարեւորած է Հայաստան-ԱՄՆ համագործակցութեան շարունակական զարգացումը եւ ընդգծած է Հայաստանի մէջ ժողովրդավարական բարեփոխումներու արդիւնաւետ իրականացման գործին մէջ ԱՄՆ աջակցութիւնը:

Հայաստանի կառավարութիւնը բարձր կը գնահատէ ԱՄՆ ջանքերը Հայաստան-Ատրպէյճան խաղաղութեան գործընթացին մէջ եւ տարածաշրջանին մէջ կայունութեան հաստատման ուղղուած քայլերուն մէջ, եզրափակած է Հայաստանի վարչապետը:

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՎԿԱՏՎՈՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԻՍՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏ

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխավորութեամբ տեղի ունեցած է Անվտանգութեան խորհուրդի նիստ:



Նիստին, բացի Անվտանգութեան խորհուրդի անդամներէն, մասնակցած են նաեւ Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանը, Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Յարութիւնեանը, ԱԺ փոխնախագահ Ռուբէն Ռուբինեանը, ԱԺ Արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանեանը եւ ԱԺ «Զարգացման հարցերու յայտնագիր» խմբակցութեան ղեկավար Հայկ Կոնճորեանը:

Նիստի ընթացքին ընկերակցած են ընթացիկ օրակարգային եւ ռազմավարական բնոյթի հարցեր:

ԱՄԵՆԱՇԱՏ ԶԲՕՍԱՇՐՋԻԿՆԵՐ ՀՀ ԱՅՑԵԼԱԾ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԵՆ, ՎՐԱՍՏԱՆԵՆ, ԻՐԱՆԵՆ

Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայութեան հրապարակած տուեալներուն համաձայն, 2023-ին Հայաստան այցելած է 2 միլիոն 316 հազար 666 զբոսաշրջիկ: Նախորդ տարուան համեմատ այցելութիւններուն աճը կազմած է 39 տոկոս:

Ամենաշատ զբոսաշրջիկները Հայաստան այցելած են Ռուսաստանէն՝ մէկ միլիոն 139 հազար 853 մարդ, կամ զբոսաշրջիկներուն 49 տոկոսը: Երկրորդ տեղը Վրաստանն է՝ այնտեղէն 253 հազար 759 մարդ այցելած է Հայաստան, իսկ Իրանէն Հայաստան այցելած է 150 հազար 766 մարդ:

Տասնեակ հազարաւոր զբոսաշրջիկներ Հայաստան այցելած են նաեւ ԱՄՆ-էն, Յնդկաստանէն, Գերմանիայէն, Ֆրանսայէն, Ռուսիայէն, Չինաստանէն, Ֆիլիպինէն եւ այլ երկիրներէ, մեկական այցելու՝ Անկոլայէն, Պարագուայէն, Կամպիայէն, Չառէն, Սենթ-Վենսենթէն:

2023 թուականին Հայաստան այցելած են Ատրպէյճանի 23 քաղաքացիներ:

«ՉԻ ԿՐՆԱՐ ԸԼԼԱԼ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՀԱՆՈՒՄԸ, ՈՐ ԱՆՁԱՍ Ե ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԵՆ»

ԱԺ ՓՈԽՆԱԽԱԳԱՐ ՌՈՒԲԻՆԵԱՆ՝ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՈՒՆԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Ազգային ժողովի 6 Փետրուարի նիստին, Ազգային ժողովի ընդդիմադիր «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Արթուր Խաչատրեանը դիմ արտայայտուեցաւ «Հայոց պատմութիւն» առարկան «Հայաստանի պատմութիւն» անուանափոխելուն՝ իշխանութիւնը մեղադրելով ազգը, ժողովուրդը ու պետութիւնը հակադրելու մէջ: ԱԺ փոխնախագահ Ռուբէն Ռուբինեան արձագանգեց, որ չի կրնար ժողովուրդին շահը անջատ ըլլալ Հայաստանի Հանրապետութեան շահէն:



«Հայաստան բառին հետ ի՞նչ խնդիր ունիք: Հայ ժողովուրդին պատմութիւնը պատմութիւն է ժողովուրդի մը մասին, որ միշտ պայքարած է պետութիւն ունենալու համար, պարբերաբար պետականութիւնը կորսնցուցած է, չէ վիստած, դարձրել շարունակ պահած է պետականութեան երազանքն ու զաղտփարը են տարբեր կետերու մէջ վերագրած է այդ պետականութիւնը, ի երջանկութիւն բոլորիս, հիմա ալ մենք կ'ապրինք ազատ ու անկախ Հայաստանի մէջ», ըսաւ Ռուբինեան:

Պատգամաւորը դիմ է ընդդիմադիր պատգամաւորի առջարկին՝ առարկան անուանելու «Հայաստանի եւ ժողովուրդի պատմութիւն»:

«Արդեօք հայ ժողովուրդի պատմութիւնն ու Հայաստանի պատմութիւնը տարբեր բաներ են. իմ կարծիքով՝ նոյն բանն է», նկատեց Ռուբինեան՝ ընդգծելով, որ հարցը այն է, թէ որ դիտանկիւնէն կը նային պատմութեան:

«Հայ ժողովուրդը ո՞ր ձեւաւորուած է որպէս ժողովուրդ՝ Հայաստանի մէջ: Մեր պատմութիւնը պատմութիւն է՝ Հայաստանի մասին, ի՞նչ խնդիր կայ»:

Անդրադառնալով Արթուր Խաչատրեանի մեղադրանքին, որ իշխանութիւնը ժողովուրդը կը հակադրէ պետութեան՝ Ռուբինեան նոյն մեղադրանքը ուղղեց պատգամաւորին:

«Մեր տեսանկիւնէն Հայաստանի ժողովուրդն ու Հայաստանը անբաժան են: Չի կրնար ըլլալ ժողովուրդի շահ, որն անջատ է Հայաստանի շահէն: Չի կրնար ըլլալ նաեւ Հայաստանի շահ, որն անջատ է ժողովուրդի շահէն», ըսաւ ԱԺ փոխնախագահը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՆԵՑԱԾ ԵՆ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեան այցելեց Հունգարիոյ նախագահի նստավայր՝ Շանտոր պալատ, ուր հանդիպում ունեցաւ նախագահ Զաթալին Նոկաի հետ:



Երկու նախագահները առանձնազրոյց ունեցան, որուն յաջորդեց լայն կազմով հանդիպումը՝ ՀՀ առողջապահութեան նախարար Անահիտ Աւանեսեանի, արտաքին գործերու նախարարի տեղակալ Պարոյր Յովհաննիսեանի, կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսեանի, Ազգային ժողովի պատգամաւոր Հովհաննիսեանի մասնակցութեամբ:

Հանդիպումէն յետոյ ԿԳՄ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսեանը եւ Հունգարիոյ մշակոյթի եւ նորարարութեան պետական քարտուղար Պալաշ Հանթոս ստորագրած են համագործակցութեան յուշագիր:

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեան պաշտօնական այցով կը գտնուի Պուտափէշթի մէջ: Պաշտօնական այցի ընթացքին նախագահ Վահագն Խաչատուրեանը հանդիպումներ կ'ունենայ նաեւ Հունգարիոյ վարչապետ Վիգոր Օրպանի, Ազգային ժողովի նախագահ Լասլո Քլոյճի հետ:

ՀՀ նախագահը պիտի հանդիպի նաեւ Հունգարիոյ հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ:

ԱՆԱՉՆԻՒ ՄԱՐԴՈՑ ԴԵՏ ՎԱՐՈՒԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Անաչնի մարդոց դրսեւորած արարքները տեսնելով՝ առաջին մտածումը, որ հաւանաբար գրեթէ բոլոր մարդոց միտքէն կ'անցնի այն է, որ անաչնի մարդոց հետ պետք է վարուիլ անազնուօրէն. այսինքն՝ հին Օրէնքի սահմանած կարգով, «ակն ընդ ակն, ատամ ընդ ատաման» (Աչքի դէմ աչք եւ ակռայի դէմ ակռայ - տե՛ս Մտ 5.38):

Զաղաքակիրթ աշխարհը, որ կը թուէր, թէ տարբեր պիտի ըլլար խաւար դարերու դիտարկութեան եւ թշնամանքի իրաւաբանութեան եւ գիտակցի հաւասարակշռութեամբ յառաջ պիտի տաներ մարդկութեան կեանքը, դժբախտաբար երազ դարձուց մարդկային բոլոր սպասումները եւ ձգտումները: Ներումի քաղաքակրթութիւնը տկարութիւն համարուեցաւ, անցեալի պատահարը մոռնալը՝ անհոգութիւն, իսկ անտարբերութիւնը՝ յիմարութիւն: Այս իրականութեան ամենէն ցայտուն փաստերէն մէկը աշխարհի տարբեր երկիրներուն մէջ ծայր առած եւ շարունակուող պատերազմներն են, որոնք ամէն օր արհեստագործութեամբ կը կեղտոտեն զուարթ փողոցները մեր կեանքի եւ կը քանդեն աղի արցունքով ու ճակտի արդար քրտինքով կառուցուած տունները:

Անազնուօրէն իբրեւ պատասխան ցուցաբերող ազնուութիւնը՝ բացառիկ առաքինութիւն է: Միայն անբնական մարդիկ չեն կրնար գնահատել արժեքը իրենց նկատմամբ ցուցաբերուած ազնուութեան, իսկ ամբարտաւանութեամբ փնջացած հոգիները բնա՛ւ չեն կրնար նկատել ուրիշներուն արտայայտած ազնուութիւնը իրենց հանդէպ, որովհետեւ համապատասխան զգայարանքը երկար ժամանակ անգործութեան մատնուած ըլլալով՝ սոյն զգացումն ալ վերջնականապէս չքացած կ'ըլլայ անոնց հոգիէն:

Նախանձը, ատելութիւնը, թշնամական վերաբերումը, երբեմն ընկերային կեանքի այս կամ այն դէպքին հետ առնչութիւն ունեցող հարց մը պատճառ կը հանդիսանան, որ որոշ մարդիկ անտեղի կեցուածք ճշդէն ուրիշներու նկատմամբ: Բացայայտ կեցուածքը իր «դրական» երեսունի, սակայն միակողմանի թշնամանքը շատ աւելի վտանգաւոր է: Այս պարագան կը նմանի անսպասելի հարուածի մը, որ պատահական կը ստանաս փողոցը քալած ատենդ կամ հանգստանալու պահուով:

Հոգեբանութիւնը վերլուծած է մանա պարագաներ: Գիտութիւնը իբրեւ օրինակ կը ներկայացնէ մարդիկ, որոնք առանց նոյնիսկ մօտէն ճանչնալու քեզ՝ կը թշնամանան քեզի: Այս պարագային, թշնամացող ենթական հոգեկան որոշ խանգարումներու պատճառով կ'իյնայ այդպիսի թակարդի մը մէջ: Երեւանապէս աշխարհը ժխտական մեծ դերակատարութիւն ունի ուրիշը թշնամի համարելու պարագային, անոր վայելած առաւելութիւնները, ապրած միջավայրը, ցոյց տուած հոգեկան խաղաղութիւնը եւ տակաւին շատ ուրիշ պատճառներ նկատուող ենեւանով: Այսպիսի անձերու առօրեային մաս կը կազմէ կասկածը, որ ամենէն առաջ իրենց վրայ կեղտոնացած կ'ըլլայ: Հակառակ անհոգի աշխատանքին՝ զգացուող տեղեւորը, բայց մանաւանդ այլոց մեծաբայ յարաբերութիւնը պատճառ կը դառնան, որ հոգեկան այլեւթոման ենթարկուին նման մարդիկ: Դժբախտութիւն է անշուշտ, երբ տագնապահար անձերը ներքին մակարդակի վրայ չեն լուծեր իրենց հարցը, այլ զայն կը տարածեն ընկերութեան կեանքի մէջ:

Այսպէս, անոնք անտեղի բաղդատականներ կը կատարեն իրենց եւ ուրիշներու միջեւ, որոնք, ըստ իրենց, աւելի լաւ դիրք ունին եւ հանգամանք: Հարցը այն է, որ այդ հանգամանաւորը լո՛ւր անգամ չ'ունենար, եւ աւելի ուշ պատահաբար՝ միայն կ'իմանայ, թէ ուշադիր «հետեւող» ունի իր կեանքի իւրաքանչիւր քայլին:

Վերոյիշեալ կերպարը, որ միակողմանի թշնամանքով կը հետեւի յաջողակ անձին, փաստօրէն այս կեանքին մէջ իր տեղը չգտած մարդ է՝ ամենօրեայ խարխալումի մէջ ինկած, որ չի՛ կրնար օրը երեկոյանցել առանց ուրիշներու առօրեային հետեւելու: Ուրեմն, այսպիսի անձերու միակ գործը ուրիշներուն կեանքին հետեւիլն է, եւ մանաւանդ հնարաւոր բոլոր միջոցներով անոր յառաջդիմութիւնը խանգարելը:

Հոգեկան սոյն տագնապահար վիճակին մատնուած անձեր չեն կրնար առանց բաղդատականի անցնել իրենց առօրեան: Մեկուն ունեցուածքը, ուրիշին գիտութիւնը, ուրիշի մը ընտանիքը եւ զաւակները, եւ այսպէս շարունակաբար: Անոնք հիւանդագին սոյն վիճակին մէջ այնքան դժբախտ են, որ առիթ չունին շունչ քաշելու եւ իրենց սովորական կեանքը վայելելու: Այս թշնամականներուն հանդէպ միայն մեր գուրջ կրնայ բժշկարար անուղղակի միջոց ըլլալ, գէթ ժամանակի մը համար անոնց միտքէն հեռացնելու ուրիշներով զբաղուելու մոլուցքը:

Նոյնիսկ ցուցաբերուած գուրջ պետք է անուղղակի ըլլայ, այնպէս անոնք միշտ պատրաստ են յարձակելու մեր վրայ, որովհետեւ իրենց անազնուօրէն կ'ըլլան մտային հաւասարակշռութիւնը:

Անմտութեան աստիճանին հասած եւ նոյնիսկ իրենց առօրեայ հանգիստը կորսնցուցած ու հոգեպէտ տագնապահար վերոյիշեալ տեսակի մարդիկ անպայման վնասակար չեն ըլլար: Ոմանք իրենց երեւակայական աշխարհին մէջ կը փակուին. սակայն, վտանգաւոր հանգամանք կը ստանան անոնք՝ որոնք իրենց նախանձի առարկայ մարդուն նկատմամբ այնպիսի դիրք կ'որոշագրեն, որ անոր վերջնական կործանումը միայն կը հանգստացնէ զիրենց:

Բարոյագիտութեան կատարած ուսումնասիրութիւնը եւ մարդկային դաստիարակութեան ուսանելի կանոնը խեղճութեան վերաբերու կը հագցնէ այն մարդոց, որոնք առանց իրենց անյաջողութեան ճշգրիտ պատճառը գիտնալու, ուրիշներու վրայ կ'ուզեն բարդել յանցանքը: Անոնք նոյնիսկ յաջողելու ո՛չ մէկ փորձ կրնան կատարած ըլլալ, սակայն յաջողակներուն նկատմամբ դիմով եւ ատելութեամբ կը լեցուին: Նման խեղճութիւններու հետ վիճաբանիլը մեծ սխալ է, որովհետեւ մեծամտութիւնը անվստահութեան միախառնուած, ահաւոր հոգեվիճակ ստեղծած կ'ըլլայ անոնց ներսիդին: Անոնք շարքերուն մէջ յաճախ

ԳՐԻԳՈՐ ԱՐԸ. ԶԻՖՅԵՏԱՆ

(Շար.ը տեսնել 3րդ էջ)

ԱՐԱՐԱԴ ԶԱՎԱԿԱՆ ԿՐԻՍԻՍ

ԱՍԻՈՑ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՄԱՐՏԱԿԱՆ ՅՈՐԴԱՆԱՆ ԴԵՊԻ ԱՄԱՐՏԱԿԱՆ

Երեքշաբթի երեկոյեան Զաբաթի մագրոգադաշտերուն վրայ սկսան Ասիոյ ֆուտբոլի բաժակի կիսաարտական հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի առաջին մրցումին, այս մրցաշարի անակնկալ Յորդանանի հա-



լաքականը մրցեցաւ հարաւային Զորեայի դէմ, Ալ Ռայան քաղաքի մագրոգադաշտին վրայ: Դասարակչուած մրցումի ընթացքին Յորդանան անկի արդիւնաւետ ձեռով գործող կազմն էր: Զաբաթի «Ալ Ալի»-ի յարձակող Եազան Ալ Նայմաթ՝ 53-րդ եւ Ֆրանսայի «Մոնպելիէ»-ի յարձակող Մուսա Ալ Թամարի՝ 66-րդ վայրկեաններուն նշանակեցին խումբին կոլերը, Մուսա Թամարիի եւ կիսապաշտպան Սիպար Ալ Ռըշտանի փոխանցումներով: Յորդանան տարաւ արժանի յաղթանակ մը եւ անցաւ աւարտական հանգրուան, ուր պիտի մրցի Իրան - Զաբաթ մրցումի յաղթողին դէմ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Յորդանան - Զաբ.Զորեա 2-0

ՄԻՋԱԶՊԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ ԸՈՍԹԱ ՌԻԷԱ ՅԱՂԹԵՅ

Շաբաթավերջին տեղի ունեցաւ ֆուտբոլի միջազգային բարեկամական մրցում մը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Զոսթա Ռիքա - Էլ Սալվատոր 2-0

ԿԻՆԵՐՈՒ ԶԵՄՓԻԸՆԸ ԼԻԿԻ ԿԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆ

- Պրան (Երբ.) - Պարսելունա (Սպ.)
- ՍԼ Պենֆիլա (Փոր.) - Օլիմպիկ Լիոնէ (Ֆր.)
- Այաքս Ամսթերտամ (Հոլ.) - Չելսի (Անգ.)
- Զաաքըն (Շուեյտ) - Փարի Սէն Ժերմէն (Ֆր.)

ԱՆԳԼԻՈՑ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ԴԱՆԳՐՈՒՄ ՍԻԹԻ ԳՐԱՒԵՅ 2-ՐԴ ԴԻՐԸ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 23-րդ հանգրուանի վերջին մրցումին, 2-րդ դիրքը գրաւող «Մանչեսթըր Սիթի» իր դաշտէն դուրս մրցեցաւ 15-րդ դիրքը գրաւող «Պրենթֆորտ»-ի դէմ ու արձանագրեց իր 15-րդ յաղթանակը: Մրցումի 21-րդ վայրկեանին՝ ֆրանսացի յարձակող Մոփայ Նշանակեց «Պրենթֆորտ»-ի կոլը, հոլանտացի բերդապահ Ֆլեքսի փոխանցումով: Սակայն, կիսապաշտպան Ֆոտեն՝ 45+3-րդ, 53-րդ եւ 70-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուց 1-3, պեղծիքացի կիսապաշտպան Տէ Պրոյնի եւ Նորվեկիացի յարձակող Զաալանտի փոխանցումներով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Պրենթֆորտ - Մանչեսթըր Սիթի 1-3
- Դասարակում. 1)Լիվըրպոլ 51 կետ 52-22, 2)Մանչեսթըր Սիթի 22 մ 49 կետ 54-25, 3)Միլուալ 49 կետ 47-22, 4)Ասթըն Վիլլա 46 կետ 49-30, 6)Մանչեսթըր Եուն. 38 կետ 31-32, 11)Չելսի 31 կետ 38-39:

ՄՊԱՆԻՈՑ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ԴԱՆԳՐՈՒՄ ԱՆԻՅԱ ՅԱՂԹԵՅ

Շաբթուան սկիզբը շարունակուեցաւ Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 23-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի վերջին մրցումին, 13-րդ դիրքը գրաւող Մատրիտի «Ռայո Վալեքանո»-ն իր դաշտին վրայ ընդունեց 16-րդ դիրքը գրաւող «Սելիայա»: «Սելիայա» կրցաւ յաղթել ու 20 կետով բարձրացաւ 15-րդ դիրք: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Ռայո Վալեքանո - Սելիայա 1-2

ԳԵՐՄԱՆԻՈՑ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ԴԱՆԳՐՈՒՄ ԼԱՅՓՅԻԿ ՅԱՂԹԵՅ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 20-րդ հանգրուանի մրցումներու ժրիկն մէջ, 5-րդ դիրքը գրաւող «Լայպցիգ» իր դաշտին վրայ մրցեցաւ 15-րդ դիրքը գրաւող «Իւնիոն Պերլին»-ի դէմ ու յաղթանակ տարաւ: Պեղծիքացի յարձակող Օփենտա՝ 11-րդ եւ սլովէն յարձակող Շեշքո՝ 48-րդ վայրկեաններուն նշանակեցին խումբին կոլերը, պաշտպան Ռաուֆի փոխանցումով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Վոլֆսպուրկ - Զոֆինհայմ 2-2
- ՌՊ Լայպցիգ - Իւնիոն Պերլին 2-0
- Դասարակում. 1)Պայեր Լեվերքուզըն 52 կետ 52-14, 2)Պայեր Սիւնիտ 50 կետ 59-19, 3)Շտուտգարթ 40 կետ 46-26, 4)Պորուսիա Տորթմունտ 37 կետ 40-26, 13)Պոր. Մեոն-Զընկլատպայի 21 կետ 36-41, 16)ՖՍ Բեյլն 15 կետ 14-34:

ԳԵՐՄԱՆԻՈՑ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏ. ՖՈՐԹԻՆԱ ԵՒ ԸԱՅՉԸՐՍԼԱՆՈՒԹԸՐՆ ԱՆՑԱՆ ԿԻՍԱՄԱՐՏԱԿԱՆ

Երեքշաբթի երեկոյեան սկսան Գերմանիոյ ֆուտբոլի բաժակի քառորդ աւարտական հանգրուանի մրցումները: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Մենթ Փաուլի (Բ.) - Ֆորթինա Տուսըլտորֆ (Բ.) 2-2 տուգ. 3-4 յետ երկարաձգումի
- Զերթա Պրիլն (Բ.) - Զայդըրալտուզըն (Բ.) 1-3

ԻՏԱԼԻՈՑ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ԴԱՆԳՐՈՒՄ ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ ՅԱՂԹԵՅ ԵՆՈՎԵՆԹԻՄԻՆ

Շաբաթավերջին շարունակուեցաւ Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 23-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանին տեղի ունեցաւ գագաթի մրցումը առաջատար «Ինթեր Միլան»-ի ու 2-րդ դիրքը գրաւող Թորինոյի «Եուվենթիս»-ի միջեւ: Դասարակչուած մրցումի 37-րդ վայրկեանին, «Եուվենթիս»-ի պաշտպան Կաթթի չկրցաւ



զգայել յարձակում մը ու սխալմամբ նշանակեց իր բերդին մէջ: Զերինի Սիլիարեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին «Ինթեր Միլան»-ի կազմէն ու 51-րդ վայրկեանին դեղին քարտ ստացաւ: «Ինթեր Միլան» տարաւ իր 18-րդ յաղթանակը ու հեռացաւ «Եուվենթիս»-էն ընդհանուր դասարակումին մէջ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Լեչչէ - Ֆիորենթինա 3-2
- Ֆրոզինոնէ - ԱՍ Միլան 2-3
- Պոլոնիա - Սասուոլո 4-2
- Նափոլի - Վերոնա 2-1
- Աթալանթա - Լացիո Ռոմա 3-1
- Ինթեր Միլան - Եուվենթիս 1-0
- Դասարակում. 1)Ինթեր Միլան 22 մ 57 կետ 51-10, 2)Եուվենթիս 53 կետ 36-14, 3)ԱՍ Միլան 49 կետ 46-27, 4)Աթալանթա 22 մ 39 կետ 40-22, 5)Պոլոնիա 22 մ 36 կետ 29-22: 21:45 Ռոմա (6) - Զալիարի (18)

ԱՄՏՐԻՈՑ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏ. ՍԱԼՅՊՈՒՐԿ ԵՒ ՇԹՈՒՐՍ ՅԱՂԹԵՅԻՆ

Շաբաթավերջին տեղի ունեցաւ Աւստրիոյ ֆուտբոլի բաժակի քառորդ աւարտական հանգրուանի մրցումները: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- ԼԱՍԷ Լինց (Ա.) - Սալցպուրկ (Ա.) 2-3
- Շթուրմ Կրաց (Ա.) - Աւստրիա Վիեննա (Ա.) 2-0
- Լեոպոլտ (Բ.) - Ռայնտորֆ Ալթաշ (Ա.) 2-1
- Ռափիտ Վիեննա (Ա.) - Սելթա Փելզըն (Բ.) 3-1

ՊԵԼՏԻՅԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏ. ԸԼԵՕՊ ՊՐԻԺԺ, ԱՆՎԵՐ ԵՒ ԻՆԻՈՆ ՅԱՂԹԱԿԱՆ

Երեքշաբթի երեկոյեան սկսան Պելժիքայի ֆուտբոլի բաժակի քառորդ աւարտական հանգրուանի մրցումները: Ա. Մրցումին, 5-րդ դիրքը գրաւող «Ըլեոպ Պրիժժ»-ը իր դաշտէն դուրս մրցեցաւ 3-րդ դիրքը գրաւող «Կենթ»-ի դէմ ու յաղթանակ տարաւ: Նրազիցի յարձակող Թիակոյի 17-րդ վայրկեանին նշանակեց կոլով, դանիացի յարձակող Սթով Օլսընի փոխանցումով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Կենթ (Ա.) - Ըլեոպ Պրիժժ (Ա.) 0-1
- ԸՎ Օսթընտ (Բ.) - ՌՎ Մոլենայիթ (Ա.) 2-0
- ՕՂ Լիւվէն (Ա.) - Անվեր (Ա.) 2-3
- Իւնիոն Սէն Կիլուազ (Ա.) - Անտըլէթա (Ա.) 2-1

ԵԳԻՊՏՈՍԻ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏ. ԱԼ ԻԹԹԻԶԱՏ ԵՒ ԱԼ ՄԱՍՐԻ ԴԵՊԻ ԿԻՍԱՄԱՐՏԱԿԱՆ

Շաբթուան ընթացքին տեղի ունեցաւ Եգիպտոսի ֆուտբոլի լիկայի բաժակի քառորդ աւարտական հանգրուանի մրցումները: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ալ ժէշ - Ալ Կունա 1-1 տուգ. 6-5
- Ալ Իթթիհատ Աղէքս. - ԷՆՓՓԻ 2-0
- Սերամիքա Ըլեփաթա - Սմուհա 2-0
- Ալ Մասրի - Փիրամիժ 3-1

ԽՐՈՒԹԻՈՑ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 21-ՐԴ ԴԱՆԳՐՈՒՄ ՕՍԻՅԷ ԶԱՂԹԱՆԱԿ ՏԱՐԱՒ

Չմեռային դադարէն ետք վերսկսան Խրուաթիոյ ֆուտբոլի ախոյեանութեան մրցումները: շաբաթավերջին տեղի ունեցան 20-րդ հանգրուանի մրցումները: Դասարակականի պաշտպան Սթիվան Մրոտչեանի մաս կազմած 4-րդ դիրքը գրաւող «Օսիլէ»-ը իր դաշտին վրայ մրցեցաւ 10-րդ դիրքը գրաւող Չակրեպի «Ռուտեշ»-ին դէմ ու արձանագրեց իր 8-րդ յաղթանակը: Սկրտչեան մնաց պահեստայիններու նստարանին վրայ: Իսկ 21-րդ հանգրուանին, «Օսիլէ» իր դաշտին վրայ ընդունեց 2-րդ դիրքը գրաւող Սփիլթ քաղաքի «Նշանաւոր «Յայտուք»-ը ու մրցումը աւարտեցաւ հաւասարակեցումով: Սկրտչեան մնաց պահեստայիններու նստարանին վրայ: «Օսիլէ» 31 կետով պահեց 4-րդ դիրքը: 21 մրցումէ 44 կետով առաջատարն է «Ռիլեքա»-ն: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Օսիլէ - Ռուտեշ Չակրեպ 2-0
- Օսիլէ - Յայտուք Սփիլթ

ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ԱՓՐԻԿԵԻ ԱԶԳԵՐՈՒ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՄԱՐՏԱԿԱՆ 19:00 Նիկերիա (1) - Զաբ.Ափրիկէ (2)
- 22:00 Փղ.Ափունք (1) - Դեմ.Զոնկո (2)
- ԱՍԻՈՑ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՄԱՐՏԱԿԱՆ 17:00 Իրան (1) - Զաբար (2)
- ԸՈՓԱ ԼԻՊԵՐՈՒՄՆԵՐՍԻ ԶՏՈՒՄԻ Ա.ԴԱՆԳՐ.ԵՐԹ 02:30 Աուրորա (181) - Մելկար (66)
- ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՅ.Բ.ՓՈՒԼԻ 2-ՐԴ ԴԱՆԳՐՈՒՄ 14:15 Ալ Ահլա (1) - Ալ Պըժ (4)
- ԱՆԳԼԻՈՑ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄԱՐՏ. 21:45 Նորթիլկեմ Ֆորթս (Ա.) - Պրիսթլ Սիթի (Բ.)
- 22:00 Ասթըն Վիլլա (4) - Չելսի (11)
- ՄՊԱՆԻՈՑ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՄԱՐՏԱԿԱՆ ԵՐԹ 22:30 Աթլետիկո Մատրիտ (4) - Աթլետիկ Բիլաո (5)
- ԳԵՐՄԱՆԻՈՑ ԱՆՈՅՅԱՆ. 18-ՐԴ ԴԱՆԳՐՈՒՄ 19:30 Մայն (17) - Իւնիոն Պերլին (15)
- ԳԵՐՄԱՆԻՈՑ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ 21:45 Սաարպուրըն (Գ.) - Պոր.Մեոնընկլատպայի (Ա.)
- ՖՐԱՆՍԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ 19:30 Օլիմպիկ Լիոնէ (15) - Լիլ (4)
- 21:30 Մոնպելիէ (13) - Նիս (2)
- 22:10 Փարի Սէն Ժերմէն (1) - Պրետս (3)
- ՓՈՒՐԹՈՒԿԱՆԻ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ 18:00 Սանթա Զարա (Բ.) - Փորթո (Ա.)
- 22:45 Ռևիսո Տէ Լեյրիա (Բ.) - Սիորթինկ Լիգայոն (Ա.)
- ՀՈՒՆՏԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ 19:45 Զամպոր Լիւվարդըն (Բ.) - Վիլթս Արնհեմ (Ա.)
- 22:00 Ֆեյենուրտ Ռոթըր. (2) - ԱՉ Ալքմաար (4)
- ՊԵԼՏԻՅԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՄԱՐՏԱԿԱՆ ԵՐԹ 21:45 Ըլեոպ Պրիժ (3) - Իւնիոն Սէն Կիլուազ (1)
- ՍԿՈՎՏԻԱՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 25-ՐԴ ԴԱՆԳՐՈՒՄ 22:00 Զիպըրիլըն (7) - Սելթիք (1)
- ԱՐՄԱՆԹԻՆԻ ԲԱԺԱԿԻ 1/32-ՐԴ ԱՄԱՐՏ. 22:00 Տեփ.Ռիթերա (Ա.) - Զոմիւնիքսպիոնէ (Բ.)
- 00:15 Պելկրանո (Ա.) - Միթթէ Սանթալիս (Բ.)
- 02:45 Ռիվըր Փելթ (Ա.) - Էքսթրիմուսիսթաս (Բ.)
- ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԷՆ.ՊԻ.ԷՅ.-Ի ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԻՒՆ 02:30 Ֆիլատելֆիա 76րդ (5) - Կոլտըն Սթէյթ Ուորիք (12)
- 05:00 ԼԱ Ըլիվըրդ (3) - Նիլ Օրլէանզ Փելթընկ (7)
- ԹԵՆԻՍԻ ԱՊՈՒ ՏՅԱՊԻԻ ԿԻՆԵՐՈՒ ՄՐՏ. 1/16-ՐԴ ԱՄԱՐՏ. 10:00-Էն սկսեալ, «beinsports» կայանէն
- ԶԵՏԵԼԱՐԸԱՒ 18:00-Էն սկսեալ Գոլմպայի շրջապագը, «eurosport»-էն
- ԼՈՂԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԻՒՆ 08:00-Էն սկսեալ, «beinsports» կայ.
- ԶՄԵՆԱՅԻՆ ՄԱՐԶԱԶԵՐԸ 19:20 Պիաթընի Աշխարհի ախոյեանութիւն, «eurosport» կայանէն:

Մերձաւոր Արեւելքի Դայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւն

ՄԻԱՅԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆԸ

SOL ՄՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Պատգամաբեր՝
ՎԵՐ. ՅՈՂԱՆՆԵՍ ՍՎԱԾԵԱՆ

Դովիւ Դայ Աւետ. Էմմանուէլ Եկեղեցոյ

Գեղարուեստական բաժին՝
Դայ Աւետ. Կ.Վ. աշակերտներուն կողմէ

Դիւզաբթի, 8 Փետրուար 2024, կ.ա. ժամը 10:30-ին, Դայ Աւետարանական Էմմանուէլ Եկեղեցի, Նոր Ամանոս:

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية | المحبرة المسؤولة: أني صرافيان
تصدر عن شركة ماسبيتر للمباعة والنشر (ش.م.م.)

www.araraddaily.com